ՃԱՇԻՆ՝ ՔՅԱԲԱԲ

Կատրինա Մակփեթերս
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Ռոյը նստեց սեղանի մոտ և բացեց իր ճաշի պայուսակը: Նրա ընտանիքը նոր էր տեղափոխվել, և սա նրա առաջին օրն էր իր նոր դպրոցում: Նրա մայրը պատրաստել էր իր սիրած հայկական ուտեստը՝ քյաբաբ: Նա մեծ ախորժակով պատրաստվում էր ուտել այն:

Ռոյը բացեց թղթով փաթաթած քյաբաբը: Այն նման էր երկար, բարակ կոլոլակի: Նա շատ էր սիրում մսին ավելացված համեմունքների բույրը: Իսկ մեջտեղի անցքը փոքրիկ սուլիչ էր հիշեցնում: Նա մոտեցրեց շրթունքները և փչեց: Ապա նա կծեց: Համե՜ղ էր:

«Հե՜յ»,- կանչեց սեղանի մյուս կողմում նստած մի տղա: «Այդ ի՞նչ տարօրինակ բան ես ուտում»:

Ռոյը զգաց, որ կարմրեց: «Սա իմ լանչն է»:

«Լա՜վ, բայց դա այդքան էլ լավ տեսք չունի»: Տղան ծիծաղեց:

Ռոյը չգիտեր՝ ինչ ասել: Նա չգիտեր, որ այստեղ ուրիշ ոչ մեկը քյաբաբ չէր կերել: Նա չէր ցանկանում, որ նրանք կարծեին, թե ինքը տարօրինակ էր: Ուստի, նա մի կողմ դրեց իր ճաշը և դուրս վազեց ընդմիջման:

Դպրոցից հետո Ռոյը գտավ մայրիկին արկղերը բացելիս:

«Ես այլևս չեմ ուզում քյաբաբ դպրոց տանել»,- ասաց Ռոյը:

«Ինչո՞ւ»,- հարցրեց մայրիկը: «Դա քո սիրած ուտեստն է»:

Ռոյը պատմեց նրան դպրոցում պատահածը: «Ես շատ ամաչեցի»:

«Ցավում եմ, որ նման բան է կատարվել»,- ասաց մայրիկը: «Շատերն այստեղ երբեք քյաբաբ չեն կերել: «Ի՞նչ կլիներ, եթե մենք երեխաներին փորձելու հնարավորություն տայինք:

«Ինչո՞ւ»,- հարցրեց Ռոյը: «Նրանք չեն ուտի»:

«Դե, չես կարող իմանալ, մինչև չհարցնես: Գիտեմ՝ դժվար է գտնել նոր ընկերներ: Բայց մենք բոլորս Աստծո զավակներն ենք: Երբեմն մենք պետք է պարզապես ավելի լավ ճանաչենք միմյանց»:

Ռոյը մտածեց այդ մասին: Նա չէր ուզում, որ ծիծաղեն իր վրա: Բայց նա ուզում էր երեխաներին ճաշի ժամանակ ավելի լավ հնարավորություն տալ հասկանալու: Եվ քյաբաբն իսկապես համեղ էր:

Նա գլխով արեց: «Լավ: Արի շատ պատրաստենք»:

Հաջորդ օրը լանչի ժամին նա խորը շունչ քաշեց: Նա նստեց իր վրա ծիծաղող տղայի կողքին:

Ռոյը բացեց ճաշի իր պայուսակը: «Չեզանից որևէ մեկը կցանկանա՞ փորձել հայկական ուտեստ»:

Երեխաները հավաքվեցին Ռոյի քյաբաբի շուրջը:

«Ես կփորձեմ մի փոքր»,- ասաց տղան:

«Ես նույնպես»,- ասաց մի աղջիկ: Ռոյը հերթով փոխանցեց քյաբաբը, որպեսզի բոլորը կարողանային փորձել: Ապա բոլորը մի փոքր փորձեցին:

«Սա շատ համեղ է»,- ասաց տղան: «Ինչպե՞ս է այն կոչվում»:

«Քյաբաբ»,- ասաց Ռոյը:

«Հոյակա՜պ է»: Տղան ժպտաց: «Ես Ջոնն եմ: Ցանկանո՞ւմ ես խաղալ դասամիջոցին»:

Ռոյը միայն կարողացավ գլխով անել լիքը բերանով: Նրա մայրը ճիշտ էր . նրանք բոլորը նույնպես Աստծո զավակներն են: Ի վերջո, կիսվելն օգնեց նրան ընկերներ ձեռք բերել: ●

ՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ՔՅԱԲԱԲԸ ԵՎ ԿԻՍՎԵՔ:

Խառնեք **1 ֆունտ (0,5 կգ) ոչխարի կամ հորթի աղացած միսը**, **1 սոխ** (կտրատած), **1/4 բաժակ բլղուր կամ հացի փշրանքներ, 2 պճեղ սխտոր** (աղացած), և **մեկական թեյի գդալ քեմոն, աղացած համեմ, կարմիր պղպեղ, դարչին** և **աղ**:

Խառնուրդը շարեք շամփուրների վրա: (Եթե օգտագործում եք փայտե ձողիկներ, ապա դրանք նախապես 30 րոպե թրջեք ջրի մեջ:) Պատրաստեք 350°F (180°C) 20 րոպե, մինչև միսը ամբողջությամբ եփվի:

ՆԿԱՐԸ՝ ՍԱՄԿ ՌՈԲԻՆՍՈՆԻ